Աշխատանքի ծածկագիր 2541

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք.Երևան 19.01.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա.Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Լ.Աբգարյանի
Ա.Վարդանյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են տարբերակ 1-ի **քրեական դատավարություն բաժնի** 1-րդ, 10-րդ, 40-րդ և 26-րդ հարցերը:

Հարց 1

Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ Հավակնորդի պատասխանն ուղղակիորեն հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներին: «Եթե նորմատիվ իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «ինչպես նաև» բառերով բաժանված պայմաններով, ապա «ինչպես նաև» բառերից հետո շարադրված պայմանները համարվում են նախկին պայմանների հետ չկապված պայմաններ»: Այլ կերպ՝ բնակարանի զննումը քրեական դատավարության ընթացքում կարող է կատարվել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի որոշմամբ, հետևաբար՝ Հավակնորդի պնդումն առ այն, որ խնդրի բոլոր պատասխանները սխալ են, անհիմն է:

Հարց 10

Հավակնորդի հիմնավորումները հակասում են ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ տվյալ իրավիճակում քրեական

հետապնդումը ենթակա էր դադարեցման արդարացնող հիմքով՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ: Վիճարկման արդյունքում գնահատականը թողնվել է անփոփոխ, քանի որ Հավակնորդի պնդումն առ այն, որ խնդրի բոլոր պատասխանները սխալ են, անհիմն է:

Հարց 40

Վիճարկման արդյունքում գնահատականը բարձրացվում է 1 միավորով, քանի որ խնդիրը հստակ ձևակերպված չէ, կարող են որպես ճիշտ պատասխան դիտարկվել նաև այլ տարբերակները: Բողոքում հավակնորդի ներկայացրած հիմնավորումները Հանձնաժողովի կողմից դիտարկվել են ողջամիտ՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության և խնդրի ձևակերպումների ոչ միանշանակությունը:

Հարց 26

Վիճարկման արդյունքում գնահատականը բարձրացվում է 1 միավորով, քանի որ խնդիրը հստակ ձևակերպված չէ, որի պայմաններում հնարավոր չէ ընտրել ճիշտ պատասխանը: Խնդրի համաձայն՝ մեղադրողը «հրաժարվել է մեղադրանքից», ուստի, խնդրի «բ» տարբերակը ճիշտ կլիներ, եթե մեղադրողը հանդես գար քրեական հետապնդումը իրականացնելուց հրաժարվելու մասին հայտարարությամբ կամ միջնորդությամբ: Ավելին, տվյալ դեպքում՝ մեղադրողը հրաժարվել է մեղադրանքից ոչ արդարացնող հիմքի ի հայտ գալու հիմնավորմամբ:

Հանձնաժողովի վերոնշյալ եզրահանգումը բխում է Կարեն Արարատի Ստեփանյանի և Մկրտիչ Աշոտի Հովհաննիսյանի վերաբերյալ ՏԴ2/0030/01/13 գործով Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման տրամաբանությունից:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 2541 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քրեական իրավունքի բաժնի ընդհանուր միավորը թողնել անփոփոխ, իսկ քրեական դատավարության բաժնի 40-րդ և 26-րդ հարցերի պատասխանը գնահատել մեկական միավոր, ընդհանուր՝ 2 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Լ.ԱԲԳԱՐՅԱՆ

Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ